U.S. Embassy Armenia

# ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամի միջև համագործակցության մասին

ՀՀ-ում ԱՄՆ դեսպանությունը (այսուհետ՝ «Դեսպանություն»), ի դեմս ՀՀ-ում ԱՄՆ դեսպան Լին Մ. Թրեյսիի, մի կողմից, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (այսուհետ՝ «Նախարարություն»), ի դեմս փոխնախարար Ժաննա Անդրեասյանի և «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամը (այսուհետ՝ «ՔՈԱՖ»)), ի դեմս գործադիր տնօրեն Կորյուն Խաչատուրյանի, մյուս կողմից, միասին հիշատակման դեպքում՝ «Կողմեր», ցանկանալով համագործակցել «Անգլախոս գյուղական համայնքներ» ծրագրի շրջանակներում, կնքում են սույն Փոխըմբռնման հուշագիրը, այսուհետ՝ «Հուշագիր» հետևյալի մասին.

## 1. ՀՈՒՇԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Կողմերը սույն Հուշագիրը ստորագրելով՝ համաձայնում են, որ անգլերենի հմտությունները նոր կրթական հնարավորություններ են ստեղծում աշակերտների համար՝ ընդլայնելու իրենց ներուժը, ձեռք բերելու նոր գիտելիքներ և հմտություններ, ինչն էլ նպաստում է իրենց անձնային աճին, խթանում համայնքային զարգացումը և մշակութային փոխըմբռնումը:

Համագործակցության շրջանակը ներառում է.

- Անգլերենի ուսուցման բարելավումը ՀՀ Լոռու մարզի գյուղական համայնքներում գործող հանրակրթական դպրոցների աշակերտների համար՝ ֆորմալ (հիմնական ծրագրերի) և ոչ ֆորմալ (արտադասարանական) խմբակների ուսուցման միջոցով, որի արդյունքում խմբակների աշակերտները կհասնեն անգլերենի C1 մակարդակի:

# MEMORANDUM OF UNDERSTANDING

on cooperation between the U.S. Embassy in Armenia, the Ministry of Education, Science, Culture and Sports of RA and the "Children of Armenia" Charitable Fund

The U.S. Embassy in Armenia, hereinafter referred to as the "Embassy", represented by the Ambassador of the United States of America to Armenia Lynne M. Tracy, on the one side, the Ministry of Education, Science, Culture and Sports, hereinafter referred to as the "Ministry" represented by the Deputy Minister Zhanna Andresyan and the "Children of Armenia" Charitable Fund, hereinafter referred to as "COAF", represented by its Executive Director Korioun Khatchadourian, acting on the base of the Charter of the Fund, on the other side, hereinafter together referred to as "Parties", wanting to cooperate within the framework of the "English-Speaking Rural Schools" program, are signing the present Memorandum of Understanding, hereinafter referred to as the 'Memorandum', as follows.

## 1. THE PURPOSE OF THE MEMORANDUM

By signing the present Memorandum, the Parties agree that the English language creates new educational opportunities for students to expand their potential, to acquire new knowledge and skills, which in turn contributes to their personal growth, community development, and mutual understanding.

The framework of the cooperation includes:

- English enhancement for students living in the villages of RA Lori region through formal and extracurricular English teaching bringing the afterschool program participants to the C1 level of English.

U.S. Embassy Armenia

C O A F

- ՀՀ Լոռու մարզի 24 /քսանչորս/ գյուղական համայնքներում գործող հանրակրթական դպրոցների անգլերեն դասավանդող ուսուցիչների կարողությունների զարգացումը վերապատրաստումների միջոցով՝ ուղղված նրանց անգլերենի իմացության և դասավանդման հմտությունների բարելավմանը:

- Ֆորմալ կրթության համակարգում հանրակրթական դպրոցների անգլերեն լեզվի որակյալ բովանդակությամբ դաս պլանների ստեղծումը՝ Նախարարության կողմից մշակված հանրակրթության նոր չափորոշիչներին համապատասխան

## 2. ՀՈՒՇԱԳՐԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. **Դեսպանությունն** իրականացնում է հետևյալ գործողությունները.

2.1.1. Սույն Հուշագրով ամրագրված դրույթներն իրագործելու համար ապահովում է Ծրագրի հիմնական ֆինանսավորումը 249,939 (երկու հարյուր քառասունինը հազար երեք հարյուր իննսունևերեք) ԱՄՆ դոլարի չափով:

2.1.2. Իրականացնում է մշտադիտարկում և վերահսկողություն ՔՈԱՖ-ի և Դեսպանության միջև կնքված համագործակցության համաձայնագրի շրջանակներում (դրամաշնորհի համարը՝ SAM10021CA3045):

2.2. **Նախարարությունն** իրականացնում է հետևյալ գործողությունները.

2.2.1. Ապահովում է հանրակրթության անգլերեն առարկայի նոր չափորոշիչների փորձնական կիրարկումը ընտրված դասարաններում ՀՀ Լոռու մարզի թիրախային 24 /քսանչորս/ դպրոցներում 2022-23 թթ. ուսումնական տարվանից սկսած:

2.2.2. Ապահովում է Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից 2022թ. ամռան ընթացքում թիրախ դպրոցների՝ անգլերենի 24 /քսանչորս/ ուսուցիչների համար իրականացվող վերապատրաստումների փորձաքննության աշխատանքների կազմակերպումը, և դիտարկում վերապատրաստման դասընթացների

- Capacity building of in-service English teachers from 24 (twenty-four) public schools in the rural communities of Lori region through teacher training aimed at improving their English language and teaching skills.

- Creation of quality lesson plans for English classes in the system of formal education in accordance with the new standards of general education.

## 2. COOPERATION AREAS

2.1. The **Embassy** carries out the following activities:

2.1.1. Provides the main financing of the Program in the amount of USD $249,939 (two hundred and forty-nine thousand and nine hundred and thirty-nine) for the implementation of the provisions of this Memorandum.

2.1.2. Carries out monitoring and supervision within the framework of the cooperative agreement (Award Number SAM10021CA3045) signed between COAF and the Embassy.

2.2. The **Ministry** carries out the following activities:

2.2.1. Ensures the pilot application of the new standards of general education for the English subject in the 24 (twenty-four) target schools of the RA Lori region starting from the 2022-23 academic year.

2.2.2. Ensures organization of pilot training for 24 (twenty-four) English teachers in the target schools during the summer of 2022 by American University of Armenia and considers the possibility of awarding credits as a result of the training within the framework of mandatory attestation.

արդյունքում կրեդիտներ շնորհելու հնարավորությունը՝ պարտադիր ատեստավորման շրջանակներում:

2.3 **ՔՈԱՖ**-ն իրականացնում է հետևյալ գործողությունները.

2.3.1. Ապահովում է ծրագրի համաֆինանսավորումը 43,884,000 (քառասուներեք միլիոն ութ հարյուր ութսունչորս հազար) ՀՀ դրամի չափով:

2.3.2. Ապահովում է ծրագրի ամբողջական համակարգումը, ներառյալ՝

- Ֆորմալ կրթության համակարգում հանրակրթական դպրոցի անգլերեն լեզվի որակյալ բովանդակությամբ դաս պլանների ստեղծումը՝ համաձայն Նախարարության կողմից մշակված հանրակրթության նոր չափորոշիչների:

- Թիրախային խմբում ներառված անգլերենի ուսուցիչների կարողությունների զարգացմանն ուղղված՝ վերապատրաստումների իրականացումը տեղում՝ նրանց կցված մենթորների միջոցով:

- Անգլերենի ուսուցումը 48 արտադասարանային խմբակների միջոցով (12 խմբակավարների կողմից) ՀՀ Լոռու մարզի 22 գյուղական համայնքներում 10-11-րդ դասարանների բոլոր աշակերտների համար:

### 3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Կողմերը կարող են պետական և մասնավոր անձանց հետ կնքել հուշագրի շրջանակում սահմանված վերոնշյալ նախաձեռնություններն իրականացնելու համար անհրաժեշտ այլ պայմանագրեր և փաստաթղթեր:

3.2. Հուշագիրն ուժի մեջ է մտնում բոլոր Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև 2024 թվականի սեպտեմբերի վերջ: Կողմերի համաձայնությամբ սույն Հուշագրի գործողության ժամկետն ու Ծրագրի իրականացումը կարող են երկարաձգվել: Հուշագրի գործողությունը կարող է դադարեցվել այդպիսի մտադրության մասին Կողմերից մեկի գրավոր տեղեկացումը Կողմերից մյուսի ստանալու պահից երեք ամիս առաջ, բայց համատեղ ծրագրի

2.3. **COAF** carries out the following activities:

2.3.1. Ensures the co-financing of the Program in the amount of AMD 43,884,000 (forty-three million eight hundred and eighty-four thousand).

2.3.2. Ensures the whole coordination of the Program, including:

- Creation of high-quality English language lesson plans in the formal education system for public schools in accordance with the new standards of general education developed by the Ministry.

- Implementation of on-job training aimed at capacity building of target teachers through mentors attached to teachers.

- Implementation of extracurricular English teaching in 48 groups (led by 12 instructors) for all students of 10-11 grades in 22 rural communities of Lori region of RA.

### 3. GENERAL PROVISIONS

3.1. The Parties may sign other agreements and documents necessary for the implementation of the above-mentioned initiatives within the framework of the Memorandum with the state and private individuals.

3.2. The Memorandum enters into force upon its bilateral signing and is valid until the end of September 2024. By agreement of the Parties, the term of this Memorandum of Understanding and the implementation of the Program may be extended. The present Memorandum may be terminated upon the written notification of one of the Parties three months prior to the termination date, but if a joint program is to be implemented, it shall be reasonably accomplished.

3.3 By mutual agreement of the Parties, the Memorandum may be amended and

իրականացնելու դեպքում այն պետք է հասցնել տրամաբանական ավարտի:

3.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ Յուշագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ՝ ձևակերպված առանձին արձանագրություններով, որոնք Յուշագրի անբաժանելի մասն են:

3.4. Ստորագրված է Դեբետում, 2021 թ. նոյեմբերի 13-ին, երեք բնօրինակից, յուրաքանչյուրը՝ հայերեն և անգլերեն: Հայերեն և անգլերեն տեքստերի միջև անհամապատասխանությունների դեպքում՝ գերակա է հայերեն տեքստը: Յուրաքանչյուր կողմին տրվում է Յուշագրի մեկ օրինակ:

supplemented by concluding separate protocols, which are the integral part of the Memorandum.

3.4. Signed in Debet, on November 13, 2021 in three original copies, each in Armenian and English. In case of any discrepancies between the Armenian and English texts, the Armenian text shall prevail. Each party is given a copy of the Memorandum.

| ՀՀ-ում ԱՄՆ դեսպանություն / U.S. Embassy in Armenia | ՀՀ Կրթության, Գիտության, Մշակույթի և սպորտի նախարարություն / Ministry of Education, Science, Culture and Sports of RA | «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ / "Children of Armenia" Charitable Fund |
|---|---|---|
| ՀՀ-ում ԱՄՆ Դեսպան/ Ambassador of the United States of America to Armenia | Փոխնախարար/ Deputy Minister | Գործադիր տնօրեն/ Executive Director |
| Լին Մ. Թրեյսի /Lynne M. Tracy | Ժաննա Անդրեասյան/Zhanna Andreasyan | Կորյուն Խաչատուրյան/Korioun Khatchadourian |